ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ
Պ-417-10.12.2019-ՊԻ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» 2018 թվականի փետրվարի 7-ի ՀՕ-95-Ն սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Օրենք) 98-րդ հոդվածի 5-րդ մասում «ուսումնական հաստատությունում» բառերից հետո լրացնել «և (կամ) «Արդարադատության ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպությունում, «Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամում» բառերը:

Հոդված 2. Օրենքի 106-րդ հոդվածի առաջին մասում «ուսումնական հաստատությունում» բառերից հետո լրացնել «և (կամ) «Արդարադատության ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպությունում, «Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամում» բառերը:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Օրենք) 106-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ իրավաբանական գիտությունների բնագավառում գիտական աստիճան ունեցող **և վերջին ութ տարիների ընթացքում առնվազն հինգ տարի բարձրագույն ուսումնական հաստատություններում իրավունք դասավանդած կամ գիտական հաստատությունում գիտական աշխատանք կատարած** անձը, որը բավարարում է Օրենսգրքի **97-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջները**, իրավունք ունի դատավորի թեկնածուների հավակնորդների ցուցակում ընդգրկվելու հայտ ներկայացնելու Բարձրագույն դատական խորհուրդ:

Վերոշարադրյալ հոդվածից պարզ է, որ նպատակ է հետապանդվում միաժամանակ ապահովելու գիտական և գործնական հարթություններում առավել հմտացած և փորձառու իրավաբանների ներգրավումը որպես դատավորներ, սակայն առաջանում է այդչափ խիստ պահանջները դատավորների թեկնածուներին վերաբերող ընդհանուր պահանջների հետ համադրելու և դրանք միասնական համակարգային տրամաբանության մեջ տեղավորելու անհրաժեշտություն, իսկ համակարգային տրամաբանության տեսանկյունից այս մոտեցումն անհասկանալի է:

Օրենքի 98-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ Օրենքի 106-րդ հոդվածում, 123-րդ հոդվածի 6-րդ մասի 3-րդ կետում և 132-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված անձանց համար **մասնագիտական աշխատանքի փորձառություն է բարձրագույն ուսումնական հաստատությունում իրավունքի դասավանդումը** կամ գիտական հաստատությունում իրավունքի ոլորտում կատարած գիտական աշխատանքը:

Նորմերի վերլուծությունից պարզ է դառնում, որ ընդհանուր պահանջներ նախատեսող՝ Օրենքի 97-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով սահմանված «առնվազն հինգ տարվա մասնագիտական աշխատանքի փորձառություն» ասվածը իրավագիտության բնագավառում գիտական աստիճան ունեցող դատավորների թեկնածուների հավակնորդների պարագայում պետք է հասկանալ **միայն բարձրագույն ուսումնական հաստատությունում իրավունքի դասավանդումը** կամ գիտական հաստատությունում իրավունքի ոլորտում կատարած գիտական աշխատանքը:

Մասնավորապես, թե ինչու է ամրագրվել **բարձրագույն ուսումնական հաստատություններում իրավունք դասավանդած լինելու** պահանջը՝ սահմանափակելով այն գիտական աստիճան ունեցողների ընդգրկման հնարավորությունը, որոնք դասավանդել են իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող հետբուհական և լրացուցիչ կրթական ծրագիր իրականացնող այլ կազմակերպությունում:

Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի օգոստոսի 8-ի «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգը հաստատելու մասին» N 327 որոշմամբ հաստատված կանոնակարգի 2-րդ կետի համաձայն՝ գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի կարող են հավակնել այն անձինք, ովքեր ունեն բարձրագույն կրթություն (դիպլոմավորված մասնագետի կամ մագիստրոսի

որակավորում) և հանձնել են քննություն Հայաստանի գիտական աստիճանաշնորհման անվանացանկի համապատասխան մասնագիտությունից: Գիտությունների դոկտորի գիտական աստիճանի կարող են հավակնել այն անձինք, ովքեր ունեն գիտության որոշակի բնագավառում ներդրած գիտական ավանդ և թեկնածուի գիտական աստիճան:

«Բարձրագույն և հետբուհական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածով տրված են «հետբուհական մասնագիտական կրթություն» հասկացությունը, որի համաձայն՝ այն բարձրագույն մասնագիտական կրթության (մագիստրոսի, դիպլոմավորված մասնագետի) հենքի վրա ասպիրանտի, հետազոտողի, հայցորդի ծրագրով իրականացվող մասնագիտական կրթությունն է և «լրացուցիչ կրթություն» հասկացությունը, որի համաձայն՝ այն մասնագիտական կրթության հենքի վրա հիմնական կրթական ծրագրերից դուրս մասնագիտական որակները կատարելագործող, մասնագիտական վերաորակավորումը ապահովող, անձի մասնագիտական որակավորումն անընդհատ լրացնող կրթությունն է:

Կան կազմակերպություններ, որոնք առավել նեղ մասնագիտական կրթական ծրագիր են իրականացնում, սակայն չեն հանդիսանում բարձրագույն ուսումնական հաստատություն, որքանով որ չեն տեղավորվում «Բարձրագույն և հետբուհական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով տրված «բարձրագույն ուսումնական հաստատություն» հասկացության մեջ, ինչպես օրինակ «Արդարադատության ակադեմիա» ՊՈԱ կազմակերպությունն է և «Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպությունն է:

Առաջարկվող նախագծով գիտական հարթությունում փորձառու իրավաբանների որպես դատավորներ ներգրավման նպատակի համար անհրաժեշտ է նախատեսել նաև վերը նշված կրթական հաստատություններում դասավանդումը:

ՏԵՂԵԿԱՆՔ

Գործող օրենքի փոփոխվող հոդվածների վերաբերյալ

Հոդված 98. Հայտի ներկայացումը

1. Դատավորի թեկնածուների հավակնորդների ցուցակում ընդգրկվել հավակնող անձը (այսուհետ՝ հավակնորդ) որակավորման ստուգման մասին որոշման հրապարակման օրվան հաջորդող օրվանից մեկամսյա ժամկետում որակավորման ստուգմանը մասնակցելու համար Բարձրագույն դատական խորհուրդ է ներկայացնում Բարձրագույն դատական խորհրդի սահմանած ձևի հայտ:

2. Հայտին կից ներկայացվում են՝

1) անձը հաստատող փաստաթղթի, նույնականացման քարտի պատճենները և էլեկտրոնային փոստի հասցեն.

2) հինգ գունավոր լուսանկար.

3) իր կենսագրական տվյալները պարունակող քարտ.

4) նոտարական կարգով հաստատված բանավոր հայտարարություն իր դատվածության և սնանկության կամ դրանց բացակայության մասին.

5) իրավաբանական կրթության՝ պահանջվող որակավորման աստիճանի առկայությունը հավաստող փաստաթուղթ.

6) հայերենին տիրապետելու հանգամանքը հավաստող փաստաթուղթ.

7) պահանջվող օտար լեզուների՝ Բարձրագույն դատական խորհրդի սահմանած համապատասխան մակարդակին տիրապետելու հանգամանքը հավաստող փաստաթուղթ.

8) պահանջվող մասնագիտական աշխատանքի փորձառությունը հավաստող ապացույց, այդ թվում՝ աշխատանքային պարտականությունները հավաստող պաշտոնի անձնագիր կամ այլ փաստաթղթեր.

9) արական սեռի հավակնորդի դեպքում՝ պարտադիր զինվորական ծառայություն անցած լինելու հանգամանքը հավաստող կամ այլընտրանքային ծառայություն անցած լինելու կամ պարտադիր զինվորական ծառայությունից ազատված լինելու փաստը հավաստող փաստաթուղթ.

¡

10) դատավորի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող ֆիզիկական արատների և հիվանդությունների բացակայության մասին Կառավարության սահմանած կարգով տրված փաստաթուղթ.

11) Բարձրագույն դատական խորհրդի սահմանած ձևով համաձայնություն՝ իր վերաբերյալ պետական մարմիններից և պաշտոնատար անձանցից, հավակնորդին ներկայացվող պահանջների համապատասխանության ստուգման սահմաններում, անհրաժեշտ անձնական տվյալներ, այդ թվում՝ բժշկական գաղտնիք հանդիսացող և այլ տեղեկություններ ստանալու մասին.

12) առավելագույնը երեք երաշխավորագիր-նամակ՝ ըստ հավակնորդի ցանկության.

13) օրենքով սահմանված չափով պետական տուրքի վճարման անդորրագիր.

14) գրավոր հայտարարություն հայտում առկա տեղեկությունների և կից ներկայացված փաստաթղթերի հավաստիության մասին:

3. Հայերենին տիրապետելու հանգամանքը հավաստվում է ուսումնական հաստատություններում հայերենով կրթություն ստացած կամ կրթական ծրագրերով նախատեսված՝ հայոց լեզու առարկայի ուսումնառությունն ավարտած և ամփոփիչ ատեստավորում անցած լինելու վերաբերյալ ուսումնական հաստատությունների տված ավարտական փաստաթղթով (վկայական, ատեստատ, դիպլոմ): Հայերենին տիրապետելու

հանգամանքը հավաստող ավարտական փաստաթղթի բացակայության դեպքում հայերենին տիրապետելու հանգամանքն ստուգվում է կրթության և գիտության ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող նախարարի սահմանած կարգով, որը պետք է նախատեսի հայերենին տիրապետելու հանգամանքի ստուգման ողջամիտ, օբյեկտիվ չափորոշիչներ, ինչպես նաև գործընթացի վերահսկողության ընթացակարգեր:

4. Սույն օրենսգրքի իմաստով՝ մասնագիտական աշխատանքի փորձառությունը բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի բարձրագույն իրավաբանական կրթության որակավորման աստիճան ձեռք բերելուց հետո իրավունքի ոլորտում իրականացված մասնագիտական գործունեությունն է, եթե այլ բան սահմանված չէ սույն օրենսգրքով:

5. Սույն օրենսգրքի 106-րդ հոդվածում, 123-րդ հոդվածի 6-րդ մասի 3-րդ կետում և 132-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված անձանց համար մասնագիտական աշխատանքի փորձառություն է բարձրագույն ուսումնական հաստատությունում **<u>և (կամ) «Արդարադատության ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպությունում, «Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամում</u>** իրավունքի դասավանդումը կամ գիտական հաստատությունում իրավունքի ոլորտում կատարած գիտական աշխատանքը:

Հոդված 106. Դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակում իրավագիտության բնագավառում գիտական աստիճան ունեցող անձի ընդգրկման կարգը

1. Իրավագիտության բնագավառում գիտական աստիճան ունեցող և վերջին ութ տարիների ընթացքում առնվազն հինգ տարի բարձրագույն ուսումնական հաստատությունում **<u>և (կամ) «Արդարադատության ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպությունում, «Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամում</u>** իրավունք դասավանդած կամ գիտական հաստատությունում գիտական աշխատանք կատարած անձը (այսուհետ՝ գիտական աստիճան ունեցող հավակնորդ), որը բավարարում է սույն օրենսգրքի 97-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջները, իրավունք ունի դատավորի թեկնածուների հավակնորդների ցուցակում ընդգրկվելու հայտ ներկայացնելու Բարձրագույն դատական խորհուրդ:

2. Գիտական աստիճան ունեցող հավակնորդը դատավորի թեկնածուների հավակնորդների ցուցակում ընդգրկվելու հայտը ներկայացնում է դատավորների թեկնածուների ցուցակի համալրման նպատակով տրված հայտարարությամբ նշված ժամկետներում:

3. Հայտին կցվում են սույն օրենսգրքի 98-րդ հոդվածով նախատեսված փաստաթղթերը, գիտական աստիճանի առկայությունը հավաստող փաստաթուղթը, ինչպես նաև գիտական աշխատությունների և հրապարակումների ցանկը:

4. Գիտական աստիճան ունեցող հավակնորդի հայտն ստուգվում է սույն օրենսգրքի 99-րդ հոդվածով սահմանված կարգով:

5. Գիտական աստիճան ունեցող հավակնորդը սույն օրենսգրքով սահմանված կարգով անցնում է որակավորման ստուգման հարցազրույցի փուլը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՊԵՏԱԿԱՆ-ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՏԱՁԳՎԱԾ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԿՈԴ՝ Պ-417-10.12.2019-ՊԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

ԱՌԱՋԱՐԿԻ ՀԵՂԻՆԱԿԸ	ՆԱԽԱԳԾԻ ԱՅՆ ՄԱՍԸ, ՈՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ Է ԱՌԱՋԱՐԿԸ	ԱՌԱՋԱՐԿԸ	ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԻՄՆԱԿԱՆ ՋԵԿՈՒՅՈՂԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ
ՀՀ Կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածում «կամ հետբուհական, լրացուցիչ կրթական ծրագիր իրականացնող կազմակերպությունում» բառերի փոխարեն լրացնել «Արդարադատության ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպության և «Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամի անվանումները	Ընդունվել է
ՀՀ Կառավարություն	Նախագծի 2-րդ հոդված	Նախագծի 2-րդ հոդվածում լրացնել «Արդարադատության ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպության և «Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամի անվանումները և պահպանել Օրենքի 106-րդ հոդվածի առաջին մասում «և վերջին ութ տարիների ընթացքում առնվազն հինգ տարի բարձրագույն ուսումնական հաստատությունում իրավունք դասավանդած կամ գիտական հաստատությունում գիտական աշխատանք կատարած» բառերը:	Ընդունվել է